ՈՒՂԵՑՈՒՅՑ
Փոքր դրամաշնորհների դիմում-հայտերի ներկայացման

«Սևանա լճի ավազանում հողային ռեսուրսների և արժեքավոր էկոհամակարգերի պահպանում և կայուն կառավարում՝ ուղղված բազմակի օգուտների» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում հայտարարվում է դրամաշնորհային մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որի նպատակն է խթանել համայնքային նախաձեռնություններ, որոնք կնպաստեն Սևանա լճի ավազանի տարածքում հողային և էկոհամակարգային ռեսուրսների պահպանությանը, կայուն օգտագործմանը և կենսապահովման նոր հնարավորությունների ստեղծմանը:

Մրցույթին կարող են մասնակցել Գեղարքունիքի մարզի **(Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ) և Վայոց ձորի մարզերի (Վայք, Ջերմուկ, Եղեգիս)** վեց շահառու համայնքների բնակիչները, ովքեր գործում են պահպանվող տարածքների և կենսաբազմազանության թեժ կետերի շրջակայքում (Շահառու բնակավայրերի համար տես *Հավելված 3*) :

Հնարավոր **շահառուներ** կարող են հանդիսանալ ֆիզիկական անձինք (18 տարեկան և բարձր)՝ ֆերմերներ կամ փոքր բիզնեսներ ովքեր արդեն զբաղվում են կամ առաջարկում են բնահեն և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ձեռնարկատիրական գաղափարներ կամ նախաձեռնություններ: Խրախուսվում է կանանց, երիտասարդների և այլ սոցիալապես խոցելի խմբերից հայտատուների մասնակցությունը:

Դրամաշնորհները տրամադրվում են բացառապես սարքավորումների, գործիքների կամ այլ բնաիրային ձևով՝ մինչև 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ արժեքի (հիմք է ընդունվում տրամադրվող սարքավորման կամ գործիքի ձեռքբերման գինը) չափով: Մեկ անձը կարող է ստանալ առավելագույնը մեկ դրամաշնորհ:

Ներկայացված ծրագրերը պետք է առաջարկեն լուծումներ Մրցույթի համար **նախընտրելի ուղղություններից**՝ հողի դեգրադացիայի կանխարգելում; ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում; կենսաբազմազանության պահպանություն; կայուն գյուղատնտեսության խթանում մեկով: Հատուկ ուշադրության կարժանանան այն նախագծերը, որոնք միտված կլինեն կանանց, երեխաների, խոցելի խմբերի կենսապայմանների բարելավմանը, ինչպես նաև տնտեսության մեջ կանաչ վերափոխումներին նպաստող նորարարությունները:

Հետաքրքրված անձինք կարող են ներկայացնել լրացված դիմում-հայտը (Հավելված 1) և անձնագրի պատճեն (տեսաներածված՝ scan) info@cep.am էլեկտրոնային փոստին՝, մինչև **2025 թվականի նոյեմբերի 30**: Դիմումների ընդունման ժամանակահատվածում նախատեսվում են իրազեկման հանդիպումներ

շահառու բնակավայրերում՝ լրացուցիչ խորհրդատվություն և պարզաբանումներ ստանալու համար:

Դրամաշնորհների տրամադրման գործընթացում առաջ եկած բողոքները հասցեագրվում են Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 65Ա, 3-րդ հարկ, էլ. փոստ՝ grm@epiu.am: Բողոքները կդիտարկվեն Ծրագրի բողոքարկման հանձնաժողովի կողմից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Այլ տեղեկություններ կամ խորհրդատվություն ստանալու համար զանգահարել +374010651631, +37410588983 հեռախոսահամարներով կամ դիմել Բնության Համաշխարհային Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղ (WWF-Armenia) https://www.wwf.am/: